

Եւ Կիրակոսի համեմատ «Զհին դաշին»
սըն Ս. Գրիգորի եւ Տրդատայ, եւ Կոս-
տանդինոսի եւ Սեղբնատրոսի, վերստին
նորոգեցին առ սովաւ» (Արիւն, Շնոր-
հալի եւ Պարագայ իւր, 1873, էջ 157):
Ապացոյց այս սերտ սիրոյ եւ միաբանու-
թեան՝ Պալիոմի տուէրութիւնը Իննով-
կենտիս Բ.էն, եւ հրաւէր 25 Սեպտ.
1141ին թուղթով առ Գրիգորիս, առաքե-
լու հրեշտակութիւն մը դէպի Հոռոմ յան-
ձին եւ գլխաւորութեամբ իր հարազատին
Շնորհալի Ներսէսի (Արարատ, տ.1893,
հտ. ԻԶ. էջ 133-38): Ժամանակագիրնե-
րուն նայելով Հայ պատուիրակութիւնը
Վիթերպոյ հասած, Ս. Բեռնարդոսի ա-
շակերտ Եւդինէոս Գ. Պապին (1145-53),
ակնանտես եղան Ս. Պետրոսի նաւակա-
տեաց տօնին այն հրաշալի տեսիլքին, որ
տեղի ունեցաւ 18 Նոյեմբերին Եւդինիոսի
պատարագին միջոց: Անոր գլխուն վերեւ
լուսացնցով ճառագայթներու կեդրոնը
զոյգ աղաւնիներ կը թեւածէին: Հայ Ե-
պիսկոպոսը վերագրեց զայս Եւդինիոսի
սրբութեան եւ Հոռոմի Եկեղեցւոյն անսը-
խալութեան, մինչ խոնարհամիտ Պապը՝
հայ եպիսկոպոսին անկեղծաւոր հաւատ-
քին:

Ս. Ներսէս Շնորհալի, մինչ կը յաջոր-
դէր Գրիգորիս եղբորը (1166ին) իր
զահակալութեան ճառին մէջ զոր խօսե-
ցաւ 17 Ապրիլին, այսպէս կը հիւսէր իր
հարազատին գովեստը. «Յոյժ հրաշափա-
ռագոյն բանիւ եւ գործով քան զբարութեան
յաթոռակալացն դատաւ նախնեաց. ի մաք-
րութիւն հոգւոյ՝ ըստ հոյս գոյով դու-
զամասնութեան. յիմաստս բանի եւ ի շա-
րադրութիւնս տառի՝ զեղեցկապէս եւ
ըստ կարգի. ի վերձանութիւնս՝ իբր թէ
նոյն է սրբ կենդանի խօսեցան ձայնիւ.
ի գիտութիւնս զրոյց ծայրագոյնս եւ ի
խորհուրդս հանճարոյ՝ ըստ տէրունեան
խրատու բարիք խորադիտութեամբ:...

Ծախիւք՝ բիւրուց եւ հազարաց պատճառ
եղեւ փրկութեան եւ ազատութեան ի ծա-
ռայութենէ»:

Իսկ անոր մահուան առիթով, մինչ
կ'անջատուէր ան հարազատէն, որուն հետ
միշտ ի միասին կենցաղավարած էր իբր
երկեակ մարմնով եւ մի սրտիւ, կը գրէր՝
թէ Գրիգորիս կը դասաւորուէր «...ընդ
հարսն՝ հայրապետն, ընդ առաքեալսն՝ եր-
կոտասանիցն լրումն, ընդ հալածեալսն
վասն արդարութեան՝ համբերողն ի հա-
լածանս եւ ի զանազան փորձութիւնս ի
հակառակաց ճշմարտութեան, ընդ փա-
ռաւորեալսն պատուեալն յԱստուծոյ, եւ
ի մարդկանէ ի կեանս. որոյ եւ մահ
պատուական եղեւ առաջի Տեառն, ըստ
գերագունից սրբոցն»: (Շնորհալի եւ Պա-
րագայ իւր. էջ 332, 337):

1173-1193, ճիշտ քսան տարիներ դա-
հակալեց ուրիշ երեւելի Գրիգոր մը,
Գրիգոր Դ. Տղայ մականունաւորած, ան-
խոտոր իր զոյգ նախորդներու արահետէն:
Բոլոր արեւելեան Հայաստանը եւ Աղուա-
նից Եկեղեցին (1179) Հոռոմկալի ժողովին
մէջ շահուած Քաղկեդոնի քրիստոսաբա-
նական բանաձեւին շուրջ, արժանացաւ
Ղուկիոս Պապի (1181-1185) խնդակցու-
թեան իր 3 Դեկտ. 1184 գրութեամբ, որ
ի նշան իր սիրոյն առաքեց պալիում եւ
իր միթը: Սոյն Գրիգոր Տղայ, Կղեմէս
Գ. Պապէն սուրբ մեռն խնդրած էր ի
նշան յարգանաց, հաղորդակցութեան եւ
հպատակութեան, որուն կը պատասխա-
նէր Պապը քաջալերելով ու ցաւակցելով
Արեւելի ու մանաւանդ սուրբ երկիրներու
կոխտուելուն այլազգիներէ, կը նկատէր
Գրիգորին մէջ իր երեսփոխանը Արեւելի
եւ Հայոց մէջ, մինչ կը գրէր. «Արդ որ-
պէս եղ Աստուած տնտես, եւ հաւատաց
ի քեզ զուգէտ ժողովուրդդ, եւ զՔեզ եղ
ճշմարիտ լոյս, զի տացես լոյս այդմ
աշխարհացդ...»: Կը յորդորէ զինքը ա-
ջակցիլ խաչակիրներուն, կը խոստանայ

հայ բանակին եւ հայ բարերարներուն Ս.
Պետրոս-Պողոսի ներողութիւնը. եւ այս-
պէս կը փակէ թուղթը՝ «...զի թէպէտ
եւ ի Մերս մարմնական աչաց տեսութենէ
բացական ես, հոգւոյ աչօք հանապազ
զՔեզ տեսանեմք, եւ ողջագութեմք սրտով
եւ սիրով, եւ զինդրուածս զոր կամիս,
հեշտութեամբ կատարեմք»:

Ուրիշ Գրիգոր մը, ոչ նուազ հռչակա-
ւոր եղաւ Գրիգոր Զ Ապիրատ (1194-203)
1196ի Տարսոնի Յունաց հետ միաբանա-
կան ժողովի հեղինակը, որուն ողին ե-
ղաւ Լամբրոնացին: Կարճատեւ կաթողի-
կոսութիւն՝ բայց հարուստ աննախընթաց
փառքերով: Հոռոմի Գահուն հետ եղբայ-
րական ու որդիական հաղորդակցութեամբ
ոչ միայն Հայ Եկեղեցին կը փառաւոր-
ուէր, այլ նաեւ Հայ Արքունիքը: Լեւոն
Ա կը կապէր արքայական թագը 6 Յուն-
ուար 1198ին, Իննովկենտիոս Գ Պապին
(1198-1216) շնորհիւ, որուն երախտա-
դէտ սրտով զեղուն սա տողերով կը
սկսէր Գրիգոր Զ Ապիրատ իր 23 Նոյ.
1198ի նամակը. «Ձեզ, որ էք զլուս յետ
Քրիստոսի, օծեալ ի նմանէ եւ զլուս
Կաթողիկէ Հոռոմեական Եկեղեցւոյ, մօր
ամենայն Եկեղեցեաց... Վեհափառ Պապ,
շնորհօք Աստուծոյ Կաթողիկոս ամենայն
Եկեղեցւոյ Հայաստանեայց, որդի Ձեր Ս.
Եկեղեցւոյ, որ է հիմն օրինաց ամենայն
քրիստոնէութեան»:

«Vobis, qui estis caput post Christum
consecrati ab Eo et caput Catholicae
Ecclesiae Romanae, matris omnium Ec-
clesiarum... Sublimis Papa... per gratiam
Dei Catholicus totius Ecclesiae Arme-
norum, filius Vestrae S.^{ae} Ecclesiae,
quae est fundamentum legis totius
christianitatis».

Նոր նուիրակութիւն մը դէպի Հոռոմ,
ուսկից ստացաւ նաեւ Պալիումը եւ թա-
չակիր բանակին համազօր ներողութիւն
հայ զօրքերուն, պսակեց այսպիսի սրտա-

զին եւ սերտ յարաբերութիւնները:

Մին մեր կաթողիկոսներէն, որոնք Քր-
իստոսի եկեղեցւոյն միութեան ջերմ սի-
րով հռչակուեցան՝ եղաւ նաեւ Գրիգոր Է
Անաւարդեցին (1294-1307): Հոռոմի դա-
հուն մէջ ճանչցաւ «Մայր եւ ուսուցիչ
ամենայն այլոց եկեղեցեաց եւ աղբիւր ի-
մաստութեան, տիպ սրբութեան, եւ կա-
նոն ուղղափառ հաւատոյ...» ինչպէս կը
գրէր 1297ին առ Վոնիփակիոս Ը Պապը:
1307ին Սոյս ժողովին կանոնները հարա-
զատ թարգմանն են իր ուղղադաւան հոգ-
ւոյն, որ 1316ին Ատանայի ժողովին մէջ
վերանորոգուեցաւ:

Այս վեց Գրիգորները, որոնց վրայ
պէտք ենք աւելցնել Գրիգոր Պետրոս Ը
Կիլիկիոյ կաթողիկոսներէն, Արեւելեան
ասաղը, մի քանի օղակներ կը ներկա-
յացնեն այն ոսկեղէն շղթային Հայ ազգի
ուղղափառ Կաթողիկոսներուն, որոնք այն
ինչ քաղաքական հանգամանքներ կը նե-
րէին, սերտիւ կապեցին Հայ Եկեղեցին
Հոռոմի տիեզերական Եկեղեցւոյն կամ նո-
րոգեցին արդէն եղած կապը, ըլլան ա-
նոնք Սոյս թէ Էջմիածնի Գահակալները:
Հայ պատմութեան անդուլ մղձաւանջին
տիրազին ողբերուն մէջ, դեռ յետ ԺԵ.
ներուն, այս ձգտումը մեր կաթողիկոս-
ներուն հայ եկեղեցւոյ երկնաւամարին
միակ լուսաւոր գիսաւորները կը կազմեն:

Ամէնէն աւելի մրկալից ամպրոպներու
տակ ալ, իբր խաղաղութեան արուեսակ
մը կը ճառագայթեն անոնք լուսամիտ եւ
լայնախոհ, սեւեռաբեր դէպի Սուրբ Կե-
փայեան փարոսը, ու կը պահեն Հայ ե-
կեղեցին ու հաւատացեալը՝ անառաւօտ
գիշերուան մը անյոյս խաւարէն:

* * *

Ասոնք են, Վսեմափայլ Գերերջանիկ
Հոգեւոր Տէր, Գրիգորներուն լուսաւոր
Համաստեղութեան 7 շողջողուն աստղերը

* *

որ կը փախչէին որպէս անշէջ փարոսներ
Հայ Եկեղեցւոյ փառաւոր երկնակամարին
վրայ՝ լուսաւորելու Ձեր կաթողիկոսական
կեանքի ուղին: Կը մաղթենք որ ան եր-
կարութեամբ մըցի ու զերպանցէ Ձեր
փառահեղ նախորդները: Կը մաղթենք որ
ան խոսանէ, համադրէ անոնց ամէնուն
առաքինութիւնները, նուաճումները, ու
փառքը: Դուք առաջին շողշողուն օղակն
էք նոր համաստեղութեան մը: Առաջին
գլխաւոր ռահիւրայ աստղը եղաւ Ս. Գրի-
գոր Լուսաւորիչ, նորադոյն համաստե-
ղութեան ստեղծումը Ձեզի վերապահուած
է՞ արդեօք: Անոնք Հոռոմի զերպանց
Աթոռէն ընդունեցան ներքող եւ խրախու-
սիչ կոնգրակներ կամ միթր, կաթողիկո-
սական քօղ, կամ պալիում, իսկ Դուք
Տիեզերական Եկեղեցւոյ Ծերակոյտին ծի-
րանին: Առաջին եւ աննախնթաց դէպքը,
հմայիչ խառնուրդը Հոռոմէական Եկեղեց-
ւոյ վառ ծիրանին հայ կաթողիկոսական
խորին հետ: Ինչ որ դեռ ձգտում մ'էր
Ձեր պանծալի նախորդներու օրերուն, Ս.
Սեղբեստրոսի եւ Ս. Լուսաւորիչի դարուն,
Պրոս ԺԲ.ի եւ Ձեր մէջ դարձաւ իրա-
կանութիւն մը՝ այն օր որ անդամ եղաք
Տիեզերական Եկեղեցւոյ Գերագոյն Խոր-
հուրդին: Այլ եւս իրողութիւն մըն է
«Կեցո՛ւ... զոր ի Հոռոմայ գահիցն վերա-
պատուեցեր» Հայ Եկեղեցւոյ շարականին
ձգտումը, մինչ կը լսէինք երկու օր ա-
ռաջ, անմոռաց ունկնդրութեան պահուն,
Սրբազանին բերնէն թէ Ձեր հոյակապ ար-
ժանիքները վարձատրելու ուղելով զՁեզ
կարդինալ ստեղծած է:

Ձեր անուանակից այդ փառապանծ
նախնիք ապրեցան եւ գործեցին բազմա-

զան ղեկարարութիւններու մէջ: Ձեր կո-
խելիք ուղին նուազ առաւար չէ: Ապա-
ռաժներ կրօնական անխորականութեան,
մինչեւ անաստուածութիւն, մոլաբ գրու-
թիւններ կանգնած են Ձեր դէմը: Ձեզ
կանխող այդ առաքինիները պիտի ըլլան
լուսաւորները, որ բեւեռային աստղի պէս
պիտի առաջնորդեն Ձեզի՝ զիշերային
մուծին, մրրկածուի ալիքներու վրայէն:
Կը մաղթենք Ձեզի, Վսեմափայլ Տէր, սըր-
տազին՝ որ լոյսի հեղեղներ ցաթեն Ձեր
վրայ այդ Հայրապետները, եւ ձեռակեր-
տեն Ձեր ձեռքերով ինչ որ քայքայուած
ու ցրուած է այսօր անոնց զարդարած
Հայ Տաճարէն: Այն աստուածային արա-
րողութիւնը որ Սիքստեան մատրան մէջ
կատարուեցաւ 12 մարտին հռչակելի օրը,
ուր Բրիտանոսի Փոխանորդին շուրջը հա-
ւաքուած Կաթողիկէ Եկեղեցւոյ իշխաննե-
րը, ջահերու եւ ամպածրար խուկի ծը-
ւէններուն մէջ, առանց ցեղի ու լեզուի
խորականութեան, հայաբարբառ Սարկա-
ւագին հետ երգեցին միեւնոյն Հանգանա-
կը, «Հաւատաւք ի մի Աստուած... եւ ի
մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստու-
ծոյ, ծնեալ յԱստուծոյ... Հաւատաւք եւ ի
մի Սուրբ Հոգին... Հաւատաւք եւ ի մի
միայն ընդհանրական եւ առաքելական Ս.
Եկեղեցի...» Այս ծիսակատարութիւնը,
այսքան չքեղութեամբ կատարուած, ըլլայ
խորհրդանշը եւ մարդարէական գուշա-
կութիւնը մերձաւոր իրականութեան մը
համօրէն հայաստանը ժողովուրդի հա-
մախմրումին միեւնոյն Ձոհին շուրջը, մի
եւ նոյն ուղղափառ համերգը ոգելու յա-
ւերժապէս:

Հ. Կ. Ա.

ՄԻՔՍՏԵԱՆ ՄԱՏՈՒՈՐ

Մեր ընթերցողներու արգար հետաքրքրութիւնը գոհացնելու համար
ստորեւ կու տանք ամփոփ նկարագիրը ու կարեւոր տեղեկութիւններ
Սիքստեան Մատրան, ուր առաջին անգամ ներկայացաւ Հայ Եկեղե-
ցին իր Հայրապետներու խորհրդական ժէսով:

Սիքստեան մատուռը 1400-ի նկարչական
մեծագոյն հրաշակերտներէն մէկն է: Մեծ
չէ ան. իրական մատուռ մըն է (40 մեզը
երկայն ու 13 լայն), ազուցուած Վատի-
կանի շէնքին. անունը առած է Սիքստոս
Դ պապէն, որ հրամայած էր 1473ին Պաշ-
չիոյ Փինթելլի ճարտարապետին անոր կա-
ռուցումը:

Պղնձէ հոյակապ դուռ մը կը բանայ
անոր մուտքը. չքեղ վանդակապատ մը
կը բաժնէ դասը ատենանէն. բոլոր որ-
մերը գոյներու եւ երանգներու զանազա-
նութիւն մըն է, եւ մարդ պէտք է սեւեռի
ամփոփուելու համար մարդկային հանճարի
մէկ կամ միւս արտադրութեան առջեւ:

Պաշչիոյ Փինթելլի 1481ին արդէն
աւարտած էր մատրան շինութիւնը, տա-
լով անոր հին քրիստոնեայ տաճարի ձեւը.
բայց կարելի չէր ճիշտ վերածնունդի այդ
դարուն ամբողջական գործ մը նկատել
միայն ճարտարապետի գործը. Սիքստոս
Դ զարդարելու համար իր մատուռը փու-
թաց կանչել գլխաւորապէս Փլորենտացի
Սանտորոյ Պոթթիլլի, Տոմենիքոյ Կիր-
լանտայիոյ, Քոդիմոյ Ռոսսելլի, Լուքա
Սինիորելլի, Փիլիթոյ Փերուճինոյ եւ նման
վարպետներ, որոնք յանձն առին կենդա-
վարպետներ, որոնք յանձն առին 12 մա-
նացնել որմերը՝ բաժնելով զայն 12 մա-
սերու, ներկայացնելու համար հոն Հին եւ
Նոր Կտակարանի յարադիր պատկերներ:
Նոր Կտակարանի յարադիր պատկերներ էր
Բայց Ս. Քահանայապետը անհամբեր էր
օր առաջ վերջացնելու գործը. Ժամանակի
օր առաջ ստեղծեց օղնականներու հար-
կը, որով իւրաքանչիւր վարպետ, զիմեց

աջակիցներու օղնութեան. այսպէս Փե-
րուճինոյ կանչեց Տօն Պարթոլոմէոյ տելլա
Կաթթա (Փիլի Սինիորիոյ Տէր), Անտրէա
Տ'Ասսիլի, եւ Փինթուրիքիոյ նկարիչնե-
րը. Տոմենիքոյ Կիրլանտայիոյ՝ զիմեց իր
Դաւիթ եղբոր եւ Յրա Տիամանդէի. Քո-
դիմոյ Ռոսսելլի ունեցաւ Փիլիթ տի Քոդի-
մոյ, իսկ Պոթթիլլի՝ Ֆիլիփպոյ Լիփիլի:

Ժամանակի վարպետներու այս խումբէն
ունեցանք մուտքի երկու կողմերը դէպի
հանդիպակաց կեդրոնական պատը երկա-
րող շարք մը նկարներ ուր իւրաքանչիւր
վարպետ դրեր է իր անձնական կնիքը, իսկ
զործակցեր, ձեւափոխեր, կամ աղբեր է
Փերուճինի իր եթերային դիմադիմերով,
Պոթթիլլի լեցուն եւ առնական տիպար-
ներով, Կիրլանտայիոյ իր ձեռքի ճարտա-
րութեամբ եւ դիւրասահ վրձինով, Սինիո-
րուլլի, Ռոսսելլի իրենց շարադրութեան դօ-
րութեամբ:

Բայց այս բոլորը երկշտ ու խոնարհ
երեւոյթ մը կ'առնեն յարադրուած Միքե-
լանճելլոյ տիպարներուն քով: Եւ իրօք
հազիւ ներս մտած կը պարզուի ճակատի
որմին բոլոր լայնքովն ու բարձրութեամբ
մեծ վարպետին վերջին դատաստանը.
բարձրացուցէք աչքերնիդ ու առաստաղը
լի է հարիւրաւոր տիպարներով, ամէնքն
ալ կենդանի, ամէնքն ալ խօսուն, տիտա-
նեան: Այդ Տիտաններն են որ աշխար-
հահռչակ ըրած են Սիքստեան մատուռի
համբաւը, եւ իրաւ որ մարդ կարծես
կ'ախոսոյ թէ ինչո՞ւ այդչափ հրաշա-